

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Պտղունք համայնքում կատարված աշխատանքների մասով:

2020 թվականի առաջին կիսամյակին Պտղունք համայնքի աշխատանքները սկսվեցին գարնան գյուղատնտեսական աշխատանքներին և ոռոգման սեզոնին նախապատրաստական աշխատանքներով: «Էջմիածին» ՋՕԸ-ի հետ համատեղ մաքրվեցին մայր ջրատարներ, երկրորդական առուներ, վերանորոգվեցին կիսախողովակներ, համայնքի կողմից տրամադրվեց բեռնատար մեքենա, ինչպես նաև համայնքի բնակիչներ Վահե Բաղդասարյանի և Արամ Բաղդասարյանին պատկանող JCB և բարձիչ մեքենաներով կատարվեցին առուների մաքրման և աղբի տեղափոխման աշխատանքներ: Տարեսկզբին կատարվել են համայնքի հողային հիմքով փողոցների հարթեցման աշխատանքներ, մասնավորապես Մոնթե փողոցից դեպի Ազգալոյան տանող ճանապարհը բացվել է, տեղափոխվել է մոտ տասը բեռնատար հող: Մարտին համայնքը հայտ ներայացրեց Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների ծրագրին՝ Պտղունքի Պտղունք համայնքի Օտյան, Դուրյան, Վարուժան, Դպրության և Թամանյան փողոցները գազիֆիկացնելու համար: Հայտն արժանացավ դրական եզրակացության, և համայնքի կողմից 50% համաֆինանսավորմամբ 2020 թվականի հունիսին սկսվեցին նոր զարգացող թաղամասին 5 փողոցների գազիֆիկացման աշխատանքները: Այս պահին շինարարական աշխատանքները շարունակվում են, մինչ այժմ կատարվել են 45%-ի չափով: Առաջին կիսամյակում ավարտվեցին Պտղունքի նոր դպրոցի կառուցման նախագծային աշխատանքները, նախագիծն ուղարկվել է պետական փորձաքննության, որի ավարտից հետո կհայտարարվի նոր դպրոցի շինարարության մրցույթ: Համայնքը նաև մասնակցում է Ասիական բանկի ծրագրով ոռոգման ներքին ցանցի վերականգնման աշխատանքների համայնքի, 10% համաֆինանսավորմամբ: Համայնքը փողանցել է իր հասանելի 3750000 ՀՀ դրամը, շուտով կսկսվեն մոտ 2 կմ ներքին ոռոգման ցանցի կառուցման աշխատանքները:

Մայիսին սկսվեցին և ավարտվեցին համայնքի Հ.Շիրազի փողոցի և Երևան-Էջմիաշին խճուղուց դեպի Մուսալեռի փողոց տանող

ճանապարհահատվածի կապիտալ վերանորոգման և փոսայցման
ասֆալտապատման աշխատանքները:

Ասֆալտապատվեց նաև Երևան-Էջմիածին խճուղուց դեպի Կորյունի փողոց
տանող ճանապարհի մի մասը:

Ամբողջությամբ ներկվեցին համայնքի երկու մանկական
խաղահրապարակների երկաթե ցանկապատերը, ինչպես նաև համայնքի
հանգստի այգու ցանկապատերը, նստարանները և սեղանները: Անդրանիկի
փողոցի մանկական խաղահրապարակում ներկվեցին նաև ատրակցիոնները
և տաղավարը: Տեղադրվեց նաև ցայտադրյուր:

Վերանորոգվեցին մանկապարտեզի տաղավարների փայտա
նստարանները:

Տարվա ընթացքում պարբերաբար վերանորոգվում են համայնքի
լուսավորության համակարգը, փողվում են վառված լամպերը և
հոսանքալարերը, տեղադրվում են նոր լուսատուներ:

Մարտի 13-ին Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում
հայտարարվեց արտակարգ դրություն՝ նոր տեսակի կորոնավիրուսի
տարածման կանխարգելման նպատակով: Այդ օրերին
համայնքաապետարանի ողջ անձնակազմը մեծ պատասխանատվությամբ
սկսեց աշխատել տանից՝ օնլայն համակարգով: Ինչպես նաև խիստ
անհրաժեշտության դեպքում այցելել են համայնքապետարան:

Համայնքապետարանը ողջ արտակարգ դրության ժամանակ համայնքում
պարբերաբար դիմակներ, ձեռնոցներ, ալկոհոլ-քլորամինի փոշի՝ բակերն
ախտահանելու համար: Համայնքում մի քանի անգամ քլորամինի 1%-անոց
լուծույթով կատարվել է փողոցների ախտահանում՝ սրսկիչ տրակտորի
միջոցով:

Մանկապարտեզի ավագ խմբի ավարտող երեխաները կես ժամվա
տարբերությամբ հրավիրվեցին համայնքապետարանի շենք, որպեսզի
ստանան համայնքի կողմից տրվող դպրոցական պայուսակները:

Համայնքում պարբերաբար կատարվում են աղբահանության
աշխատանքներ, տեղադրվել են աղբամաններ Սարյան և Օտյան փողոցների
խաչմերուկում: Չնայած արտակարգ դրության պայմաններին՝ պահպանելով

սոցիալական հեռավորությունը՝ համայնքի հասարակական վայրերում կատարվել են շաբաթօրյակներ:

Առաջին կիսամյակի ընթացքում սկսվել են բազմաթիվ հանրօգուտ աշխատանքներ, որոնք ավարտին կհասցվեն 2-րդ կիսամյակում, և 2020 թվականի տարեկան հաշվետվության մեջ կներկայացվեն արդյունքները:

Պտղունք համայնքի ղեկավար՝



Աշխատակազմի քարտուղար՝

Կ.Արթենյան

Ա.Ավագյան